Հրաչյա Ծպնեցյան, *տնտեսագիտության դոկտոր*
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Արթուր Ծպնեցյան, *տ. գ. թ., դոցենտ*
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր – ագրարային ոլորտ, ռեսուրսային ներուժ, հողային հաշվեկշիռ, հողերի կառուցվածք, բնական կերահանդակներ, արդյունավետ օգտագործում, ցանքատարածություններ, մարգեր, մշակովի հողատարածություններ, վարկավորում, տոկոսադրույքների սուբսիդավորում, նպատակային սուբսիդավորման ծրագրեր, ինքնաբավության մակարդակ, սերմնաբուծության համակարգ, արտադրատեխնիկական սպասարկումներ, ագրոտեխնիկական պահանջներ, համատեղ օգտագործում, ապահովագրական համակարգ

Ագրարային ոլորտի առջև ներկայումս ծառացած խնդիրներից է ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, դա առաջին հերթին վերաբերում է աշխատանքային, հողային, ջրային ռեսուրսներին: Գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված՝ առանձնակի կարևորվում է գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման վիճակն ու դրա արդյունավետության բարձրացման հնարավորությունների բացահայտումը և դրանց հնարավորինս օգտագործումը:

Ըստ ՀՀ 2013 թվականի հողային հաշվեկշռի տվյալների, հողային ֆոնդի և բաշխվածության ամփոփ տվյալները ներկայացվում են 1-ին աղյուսակում:

Հողային հաշվեկշռի տվյալներից ակնհայտ է, որ հանրապետության հողային ֆոնդի գերակշռող մասը՝ 69.0 %-ը, կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, հետևաբար վերջիններիս արդյունավետ օգտագործումը հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիր ոչ միայն գյուղատնտեսության, այլև ընդհանուր վերցրած հանրապետության տնտեսության համար:

Հանրապետության գյուղատնտեսական հողերի կառուցվածքում առավել գերակշռող մաս են կազմում բնական կերահանդակները՝ 57.4 %, այնուհետև՝ վարելահողերը՝ 21.9 %:

Աղյուսակ 1

ՀՀ 2013 թվականի հողային ֆոնդի առկայության և բաշխման ամփոփ (հողային հաշվեկշռի) տվյալները[1]

Հողային ֆոնդն ըստ նշանակության	Հազ. հա	Տեսակարար կշիռը, %
1	2	3
ա. գյուղատնտեսական նշանակության հողեր	2051.0	69.0
որից՝		
վարելահողեր	448.2	15.1
բազմամյա տնկարկներ	33.3*	1.1
խոտհարքներ	121.8	4.1
արոտներ	1055.3	35.5
այլ հողատարածքներ	392.4	13.2
բ. բնակավայրերի հողեր	151.7	5.1
որից՝ տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	99.1	3.3
գ. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	34.9	1.2
դ. էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	12.6	0.4
ե. հատուկ պահպանվող տարածքների հողեր	331.7	11.1
զ. հատուկ նշանակության հողեր	31.6	1.1
է. անտառային հողեր	334.3	11.2
ը. ջրային հողեր	25.9	0.9
թ. պահուստային հողեր	0.6	0.02
Հայաստանի Հանրապետության տարածքը	**2974.3**	**100.0**

* չի ներառում տնամերձ և այգեգործական հողերում առկա բազմամյա տնկարկները

[1] ՀՀ կառավարության 2013թ. հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2013 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» N 1184-Ն որոշում

Գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման առումով առանձնակի կարևորվում է վարելահողերի արդյունավետ օգտագործումը: Վարելահողերի օգտագործման վիճակը բնորոշող կարևորագույն ցուցանիշներից է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, վերջին տարիների բնորոշող տվյալները ներկայացվում են 2-րդ աղյուսակում:

Ներկայացված տվյալներից երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածի 2008-2010թթ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ունեցել են նվազման միտում: Սկսած 2011 թվականից նկատելի է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման դրական երևույթը, որի արդյունքում վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, 2013թ. տվյալներով, կազմել է 71.0 %, 2010թ. 63.2 %-ի դիմաց: Նշված դրական տեղաշարժի հետ մեկտեղ վարելահողերի նպատակային օգտագործման խնդիրը դեռևս գոյություն ունի, փաստորեն, ոչ նպատակային օգտագործվող վարելահողերի տարածքները դեռևս մեծ ծավալներ են կազմում՝ 2013թ. տվյալներով այն կազմել է 130 հազ. հա: Վարելահողերի նպատակային օգտագործման վիճակն առավել ակնառու ներկայացնելու համար այն տրվում է նաև գրաֆիկորեն:

Աղյուսակ 2

ՀՀ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի փոփոխությունը 2008-2013թթ.[2,3,4]

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Վարելահողերի տարածքը ըստ հողային հաշվեկշռի, հազ.հա	452.1	449.4	448.5	449.4	448.4	448.2
Ընդամենը ցանքատարածությունները, հազ.հա	304.5	300.0	283.6	286.7	304.2	318.2
Ոչ նպատակային օգտագործվող վարելահողերը, հազ.հա	147.6	149.4	164.9	162.7	144.2	130.0
Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %	67.3	66.8	63.2	63.8	67.8	71.0

[2] ՀՀ հողային հաշվեկշիռ

[3] Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թվականի հունվար-հունիս, ՀՀ ԱՎԾ, Երևան 2013թ., էջ 33

[4] 2013թ. բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարը: ՀՀ ԱՎԾ, Երևան 2013թ., էջ 7



Գծապատկեր 1: Վարելահողերի տարածքների և գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների փոփոխությունը 2008-2013 թթ.

Հարկ ենք համարում նշել, որ ոչ նպատակային օգտագործվող վարելահողերի զգալի մասը օգտագործվում է որպես խոտհարք, վերջինիս նպատակով 2012 թվականի տվյալներով օգտագործվել է 110.6 հազ. հա, իհարկե վերջինից ստացվող հատույցը մեծ չափով փոքր է մշակովի վարելահողերից ստացվողից:

Ըստ հանրապետության մարզերի, վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակն զգալիորեն տատանվում է: Վերջինիս մասին պատկերացում է տալիս 3-րդ աղյուսակի 2-րդ գծապատկերի տվյալները:

Աղյուսակ 3

Վարելահողերի օգտագործման մակարդակը ըստ ՀՀ մարզերի 2013թ. տվյալներով[5,6]

ՀՀ Մարզերը և Երևան համայնքը	Վարելահողերի տարածքը ըստ 2013թ. հողային հաշվեկշռի միջին տվյալների, հա	Ցանքային տարածությունը ըստ 2013թ. տվյալների, հա	Նպատակային չօգտագործվող վարելահողերի տարածությունը, հա	Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, %
Արագածոտն	54152.7	35332	18820.7	65.25
Արարատ	25465.0	21511	3954	84.47
Արմավիր	41691.1	29467	12224.1	70.68
Գեղարքունիք	81740.9	74570	7170.9	91.23
Լոռի	42074.8	27199	14875.8	64.64
Կոտայք	37818.7	16877	20941.7	44.63
Շիրակ	78700.8	60864	17836.8	77.34
Սյունիք	43835.5	31963	11872.5	72.92
Վայոց ձոր	16199.5	4507	11692.5	27.82
Տավուշ	25605.7	15306	10299.7	59.78
Երևան	915.9	567	348.9	61.91
Ընդամենը հանրապետություն	**448200.5**	**318163**	**130037.5**	**70.99**

[5] ՀՀ 2013թ. հողային հաշվեկշիռ

[6] 2013թ. բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարը: ՀՀ ԱՎԾ, Երևան 2013թ., էջ 7



Գծապատկեր 2: ՀՀ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ ըստ հանրապետության մարզերի վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակն ըստ հանրապետության մարզերի զգալիորեն տատանվում է, միջինից համեմատաբար բարձր մակարդակ գոյություն ունի ՀՀ Գեղարքունիքի, Արարատի, Շիրակի մարզերում: Նշվածի հետ մեկտեղ վարելահողերի նպատակային օգտագործման առավել ցածր մակարդակ գրանցվել է ՀՀ Վայոց ձորի, Կոտայքի, Տավուշի մարզերում:

Կարևոր է համարվում նաև միավոր մշակովի հողատարածությունների (վարելահողեր և բազմամյա տնկարկ) հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի համադրումն ըստ հանրապետության մարզերի: Հաշվարկների համար հիմք ենք ընդունել վերջին երեք տարիների 2010-2012թթ. տվյալները:

Հաշվարկված տվյալները վկայում են, որ ըստ հանրապետության մարզերի գյուղատնտեսության համախառն արտադրանքը միավոր մշակովի հողատարածությունների հաշվով ըստ հանրապետության մարզերի նկատելիորեն տատանվում է: Տվյալ ցուցանիշը հանրապետության միջին մակարդակից, բացառությամբ ՀՀ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերի, զգալիորեն ցածր է: Վերջինս պայմանավորող հիմնական գործոններից է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը: Հետևաբար առանձնակի կարևորվում է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը:

Աղյուսակ 4

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 1 հա մշակովի հողատարածության հաշվով ըստ ՀՀ մարզերի[7]

ՀՀ Մարզերը և Երևան համայնքը	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 1 հա մշակովի հողատարածության հաշվով ըստ ՀՀ մարզերի			Տարբերությունը միջինի նկատմամբ, հազ. դրամ		
	2010 թ.	**2011** թ.	**2012** թ.	**2010** թ.	**2011** թ.	**2012** թ.
Արագածոտն	1011.6	1281.7	1382.7	-252.7	-300.0	-283.4
Արարատ	2849.8	3115.9	3304.3	1585.5	1534.2	1638.2
Արմավիր	1824.3	2384.8	2634.1	560.0	803.1	968.0
Գեղարքունիք	1525.6	1835.0	1833.9	261.3	253.3	167.7
Լոռի	939.7	1282.1	1283.8	-324.6	-299.6	-382.3
Կոտայք	934.8	1195.9	1234.3	-329.4	-385.8	-431.8
Շիրակ	884.3	1160.7	1183.4	-380.0	-421.0	-482.8
Սյունիք	779.7	1081.3	1238.0	-484.6	-500.4	-428.2
Վայոց ձոր	717.8	878.4	954.4	-546.5	-703.3	-711.8
Տավուշ	979.7	1321.7	1371.6	-284.6	-260.0	-294.5
Երևան	1849.2	2225.9	2818.2	584.9	644.2	1152.0
Ընդամենը հանրապետություն	**1264.3**	**1581.7**	**1666.2**			

Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը պահանջում է այդ բնագավառում նպատակային պետական քաղաքականության իրականացում, որն առաջարկվում է իրականացնել հետևյալ ուղղություններով:

Հողային ռեսուրսների, մասնավորապես՝ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման առումով անհրաժեշտ է մի շարք պետական միջոցառումների իրականացում, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

- Գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման առումով կարևորվում է գյուղատնտեսությունում վարկավորման բնագավառում քաղաքականության վերանայումը, մասնավորապես՝ վարկերի մատչելիության բարձրացումը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը: Անհրաժեշտ է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շարունակումը և դրա աշխարհագրության ընդլայնումը: Ծրագրում ներառելով գյուղատնտեսության համար առավել անբարենպաստ՝ սահ-

[7] Հաշվարկների համար հիմք է ընդունվել ՀՀ ԱՎԾ-ի տվյալները

մանամերձ, բարձր լեռնային տարածաշրջանները: Վերջինս, որպես պետական կարգավորման լծակ կարող է արդյունավետ կիրառվել ոչ միայն վարելահողերի օգտագործման մակարդակի բարձրացման, այլև գոտիական մասնագիտացման նախընտրելի ուղղությունների խթանման համար:

- Կարևոր է համարվում գյուղատնտեսության համար առավել անբարենպաստ գոտիներում հողի մշակության համար նպատակային սուբսիդավորման ծրագրերի իրականացման վերականգնումը և դրանց կիրառման մեխանիզմների կատարելագործումը, ծրագրի իրականացման աշխարհագրության ընդլայնումը: Վերջինս զգալիորեն կնպաստի հացահատիկային, կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի մշակության տարածքների ավելացմանը և արդյունքում՝ վարելահողերի միավոր տարածքից հասույթի ավելացմանը: Նշված ուղղությամբ 2007-2009թթ. իրականացված ծրագրերի արդյունքները հետևյալն են:

Ըստ կատարված ուսումնասիրությունների՝ 2007թ. աջակցության ծրագրից օգտված համայնքներում 2007 թվականին 2006 թվականի նկատմամբ ցանքատարածությունների աճը կազմել է՝ աշնանացան ցորենի՝ 136.9 % և գարնանացան գարու՝ 118.4 %: 457 հա-ի վրա կատարվել է աշնանացան ցորենի ավել ցանք, քան 2006 թվականին, որից ստացվող բերքը կազմում է 1165.4 տոննա, արժեքը՝ 139.8 մլն դրամ: 737 հա-ի վրա կատարվել է գարնանացան գարու ավել ցանք, քան 2006 թվականին, որից ստացված բերքը կազմում է 1842,5 տոննա, արժեքը՝ 202.7 մլն դրամ: Աշնանացան ցորենի և գարնանացան գարու համախառն արտադրանքի ընդհանուր հավելաճը կազմում է 342.5 մլն դրամ, որը կրկնակի անգամ գերազանցում է պետական աջակցության գումարին:

2008թ. հիմնական օժանդակություն ստացած մարզերի տարածաշրջաններում մշակաբույսերի տարածքները 2008 թվականին գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 8.5 %-ով, ցանքատարածությունների աճը կազմել է 5909.7 հա, այն դեպքում, երբ հանրապետության առումով գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները չեն ավելացել: Պետական աջակցությամբ ցանված մշակաբույսերի համախառն արտադրանքի աճը գնահատվել է 9.0 %: Համախառն արտադրանքի աճը գնահատվում է 2450.4 մլն դրամ, որը գերազանցում է պետական աջակցության գումարը 56.6 %-ով:

Պետական աջակցություն ստացած նախկին տարածաշրջաններում (Արագած, Մարտունի, Ճամբարակ և Աշոցք), որտեղ գրեթե բոլոր համայնքները պետական աջակցության ծրագրում ընդ-

գրկված են եղել ինչպես 2008թ., այնպես էլ 2009 թ-ին, աշնանացան և գարնանացան գարու ու ցորենի ցանքատարածությունները 2009թ. գերազանցել են 2008թ. մակարդակը 78.3 %-ով և կազմել են 15050 հա (ցանքատարածությունների աճը՝ 6611 հա): Միայն տվյալ տարածաշրջաններում բերքի հավելումը գնահատվել է 15.9 հազ. տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 1.8 մլրդ դրամ (գերազանցում է պետական աջակցության գումարը):

Գյուղատնտեսության պետական աջակցության նախորդ տարիների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է այդ գործիքի նպատակաուղղումը կարևոր պարենամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը և սահմանամերձ ու բարձր լեռնային գյուղական բնակավայրերի զարգացմանը:

- Բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացման համար կարևորվում է սերմնաբուծության համակարգը: Վարելահողերի օգտագործման առումով առանձնակի կարևորվում է հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, որի արդյունքում հնարավոր կլինի մատչելի մեխանիզմներով բարձր վերարտադրության սերմերը գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատակարարումը:
- Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման առումով կարևորվում է արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավումը: Վերջինս իրատեսական է համարվում դրամաշնորհային ծրագրերով ներմուծված տեխնիկան սպառողական կոոպերատիվներին, ասոցացիաներին, միություններին մատչելի մեխանիզմներով տրամադրումը, լիզինգային ծրագրերի իրականացումը, տեխնիկա արտադրող արտասահմանյան խոշոր ընկերությունների կողմից տրամադրվող ապրանքային վարկերի միջոցով տեխնիկայի մատակարարումը:
- Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման համար կարևորվում են բուսաբուծական մթերքների իրացման խնդրի լուծումը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է համարվում գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկաների համակարգի աստիճանական ձևավորումը, տվյալ բնագավառում միջնորդ օղակների (հավաքման կետերի), տեղեկատվական կենտրոնների ձևավորումը և այլն: Վերջինս իր գործունեությունը պետք է իրականացնի հանրապետությունում ձևավորվող «Լոգիստիկ կենտրոնի» հետ:
- Գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման ուղղությամբ կարևորվում է գյուղատնտեսական

հողատեսքերի հատկանիշների պահպանումը: Այստեղ միջոցառումները պետք է ուղղվեն գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջների կատարմանը և ցանքաշրջանառության կիրառմանը, որտեղ իր դերը պետք է ունենա խորհրդատվական համակարգի բարելավումը: Նշված ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել հանքային պարարտանյութերի և այլ ռեսուրսների մատչելիության բարձրացման պետական ծրագրեր:

- Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել մասնատված հողակտորների համատեղ օգտագործման և խոշորացման, հողերի միավորման ծրագրեր: Առանձնակի տեղ պետք է հատկացնել գյուղատնտեսական հողերի համատեղ օգտագործման և խոշորացման մեխանիզմներին, մասնավորապես վերջինիս խթանմանը տարբեր լծակների (վարկեր, դրամաշնորհներ, պետական ծրագրեր) կիրառման միջոցով:
- Գյուղատնտեսական հողերի նպատակային օգտագործման առումով հրատապ է դարձել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծումը և համակարգի ներդրումը: Ապահովագրական համակարգի ներդրման առաջին քայլերից մեկը պետք է լինի, ըստ գոտիների, գյուղատնտեսության տարբեր ճյուղերում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի իրականացումը, որը հիմք կհանդիսանա ապահովագրության ոլորտում ներառվող ենթաճյուղերի առաջնահերթության, ապահովագրական վճարների սահմանման, դրանց համալրման մեխանիզմների մշակման և գործուն համակարգի ներդրման մոտեցումների համար:
- Կարևոր է համարվում բնական անցանկալի երևույթների դեմ ներգործող ենթակառուցվածքների գործունեությունը, դրանց ընդգրկման դաշտի ընդլայնումը և արդյունավետության բարձրացումը:

Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը կնպաստի գյուղատնտեսությունում ռիսկերի մեղմմանն ուղղված այլ պետական ծրագրերի իրականացումը, մասնավորապես՝ բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ պայքարը, հողերի մելիորատիվ վիճակի պահպանումը և հակահեղեղային միջոցառումները, ագրոքիմիական հետազոտությունների և դրանց արդյունքների կիրառման արդյունավետության բարձրացումը և այլն:

АННОТАЦИЯ

Грачья Цпнецян, *доктор э. н.*
Министерство сельского хозяйства РА

Артур Цпнецян, *к. э. н., доцент*
Ехегнадзорский филиал АГЭУ

СОСТОЯНИЕ ИСПОЛЬЗОВАНИЯ ЗЕМЕЛЬНЫХ РЕСУРСОВ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В МАРЗАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ЗАДАЧИ ЕГО УЛУЧШЕНИЯ

В статье проакцентирована задача эффективного использования ресурсного потенциала, в частности земельных ресурсов. На основе проведенного анализа земельного баланса республики, особое внимание уделено целевому использованию земель сельскохозяйственного назначения. В этом контексте выделена оценка уровня целевого использования пашни. Произведен анализ данных за последние 6 лет, по марзам республики. Изучено обеспечение выхода сельскохозяйственной валовой продукции в расчете на единицу обрабатываемых земель. В этом направлении отмечена роль фактора целевого использования пашни. В результативной части представлены основные направления политики повышения эффективности использования земельных наделов, в частности пашни.

ANNOTATION

Hrachya Tspnetsyan, *Doctor of Economics*
Ministry of Agriculture of the Republic of Armenia
Artur Tspnetsyan, *Candidate of Economics*, *Associate Professor*
Yeghegnadzor branch of the State Economic University of Armenia

STATE OF UTILIZATION AND IMPROVEMENT PROBLEMS OF AGRICULTURAL LAND RESOURCES IN THE RA MARZES

The Article has emphasized the problem of efficient utilization of resource potential, especially of land resources. Analyzing the land balance in the Republic, the particular importance has been given to the proper utilization of the agricultural land. In this context, the importance has been given to the evaluation of proper utilization level of arable land. The observations have been made by the RA Marzes according to the data of the last 6 years. The ensuring of gross agricultural product output per cultivated land unit has been observed. The role of proper utilization factor of the arable land has been emphasized. In the result part, the main directions of policy targeted to the improvement of the efficient utilization of agricultural land, particularly of the arable land, have been presented.